



ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

30 մարտի 2015թ.

N 73-Ա

ք.Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՄԻ 3-Ի ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՀԱՄԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՆԻ ԿՈՒՍԱԿՑՈՂ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՄԲ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ՌԱԴԻՈՑՈՎ ԱՆՎՃԱՐ ԵՎ ՎՃԱՐՈՎԻ ԵԹԵՐԱԺԱՄ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՄԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընտրական օրենսգրքի 19-րդ հոդվածի 2-րդ մասին և 121-րդ հոդվածին համապատասխան, հաշվի առնելով հանրային հեռուստատեսությամբ և հանրային ռադիոյով կուսակցությունների կողմից նախընտրական քարոզչություն իրականացնելու ժամանակացույցը որոշելու համար Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2015թվականի մարտի 30-ի նիստում անցկացված վիճակահանության արդյունքները՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը **որոշում է**.

1. Սահմանել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ազգային ժողովի 2015 թվականի մայիսի 3-ի ընտրություններին համամասնական ընտրակարգով մասնակցող կուսակցություններին հանրային հեռուստատեսությամբ և հանրային ռադիոյով անվճար և վճարովի եթերաժամ տրամադրելու կարգը՝ համաձայն N 1 հավելվածի:

2. Հաստատել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ազգային ժողովի 2015 թվականի մայիսի 3-ի ընտրություններին համամասնական ընտրակարգով մասնակցող կուսակցություններին՝

1) հանրային հեռուստատեսությամբ անվճար և վճարովի եթերաժամ տրամադրելու ժամանակացույցը՝ համաձայն N 2 հավելվածի.

2) հանրային ռադիոյով անվճար և վճարովի եթերաժամ տրամադրելու ժամանակացույցը՝ համաձայն N 3 հավելվածի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

Ս.ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ

Կ Ա Ր Գ

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ
ՄԱՅԻՍԻ 3-Ի ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՀԱՄԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳՈՎ
ՄԱՍՆԱԿՑՈՂ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՄԲ ԵՎ
ՀԱՆՐԱՅԻՆ ՌԱԴԻՑՈՎ ԱՆՎՃԱՐ ԵՎ ՎՃԱՐՈՎԻ ԵԹԵՐԱԺԱՍ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ազգային ժողովի 2015 թվականի մայիսի 3-ի ընտրություններին համամասնական ընտրակարգով մասնակցող կուսակցություններին (այսուհետ՝ կուսակցություն) նախընտրական քարոզչության ժամանակ հանրային հեռուստատեսությամբ և հանրային ռադիոյով անվճար և վճարովի եթերաժամ տրամադրվում է հավասար հիմունքներով՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընտրական օրենսգրքի և սույն կարգի պահանջներին համապատասխան:

2. Կուսակցությանը նախընտրական քարոզչություն իրականացնելու նպատակով հանրային հեռուստատեսությամբ եթերաժամ տրամադրվում է ժամը 17⁰⁰-ից մինչև 21⁰⁰-ն ընկած ժամանակահատվածում՝ սույն որոշման N 2 հավելվածով սահմանված ժամանակացույցին համապատասխան:

3. Կուսակցությանը նախընտրական քարոզչություն իրականացնելու նպատակով հանրային ռադիոյով եթերաժամ տրամադրվում է ժամը 15⁰⁰-ից մինչև 18⁰⁰-ն ընկած ժամանակահատվածում՝ սույն որոշման N 3 հավելվածով սահմանված ժամանակացույցին համապատասխան:

4. Տեխնիկական անհրաժեշտությունից ելնելով, հանրային հեռուստատեսության կամ հանրային ռադիոյի կողմից նշված ժամանակահատվածը կարող է տեղաշարժվել, բայց ոչ ավելի, քան 30 րոպե:

5. Կուսակցությանը նախընտրական քարոզչություն իրականացնելու նպատակով, սույն կարգի 2-րդ կետով սահմանված ժամանակահատվածում, հանրային հեռուստատեսությունը տրամադրում է ոչ ավելի, քան 30 րոպե անվճար և ոչ ավելի, քան 80 րոպե վճարովի եթերաժամ՝ ըստ ժամանակացույցի (հավելված N 2), ընդ որում՝

1) 2015 թվականի մարտի 31-ից մինչև մայիսի 1-ը ներառյալ բոլոր կուսակցություններին՝ ինն անգամ անվճար և ութ անգամ վճարովի հիմունքներով.

2) 2015 թվականի մարտի 31-ին՝ բոլոր կուսակցություններին 4-ական րոպե՝ անվճար հիմունքներով.

3) 2015 թվականի մայիսի 1-ին՝ բոլոր կուսակցություններին 5-ական րոպե՝ անվճար հիմունքներով.

4) 2015 թվականի ապրիլի 1-ից մինչև ապրիլի 30-ը ներառյալ յուրաքանչյուր կուսակցությանը 3-ական րոպե՝ անվճար և 10-ական րոպե՝ վճարովի հիմունքներով:

6. Կուսակցությանը նախընտրական քարոզչություն իրականացնելու նպատակով, սույն կարգի 3-րդ կետով սահմանված ժամանակահատվածում, հանրային ռադիոն տրամադրում է ոչ ավելի, քան 30 րոպե անվճար և ոչ ավելի, քան 80 րոպե վճարովի եթերաժամ՝ 2015 թվականի մարտի 31-ից մինչև մայիսի 1-ը ներառյալ՝ ըստ սույն կարգի 5-րդ կետի և համաձայն ժամանակացույցի (հավելված N 3):

7. Նախընտրական քարոզչություն իրականացնելու նպատակով հեռուստատեսային եթերաժամը տրամադրվում է հանրային հեռուստաընկերության «ԱՀ» ալիքի եթերում՝ հեռարձակումն ապահովելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ամբողջ տարածքում, իսկ ռադիոեթերաժամը՝ հանրային ռադիոընկերության 102.3 հաճախականությամբ և հանրապետական գծային ռադիոցանցով:

8. Կուսակցության ներկայացուցիչներին նախընտրական քարոզչություն իրականացնելու նպատակով հանրային հեռուստատեսությամբ և հանրային ռադիոյով տրամադրվում է եթեր,

նրանց ցանկությամբ՝ նաև հաղորդավարի մասնակցությամբ կամ հեռարձակվում նրանց կողմից ներկայացված տեսաձայնաերիզր:

9. Եթերաժամը տրամադրվում է ըստ հայտերի՝ հանրային հեռուստատեսության կամ հանրային ռադիոյի և կուսակցության միջև սույն կարգին համապատասխան կնքված պայմանագրի հիման վրա:

10. Եթերաժամ տրամադրելու համար պայմանագիր կնքելիս կուսակցության անունից հանդես է գալիս կուսակցության՝ Լեոնային Ղարաբաղի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովում գրանցված լիազոր ներկայացուցիչը կամ կուսակցության կողմից լիազորված այլ անձ: Պայմանագիր կնքելու համար ներկայացվում է կուսակցության լիազոր ներկայացուցչի վկայականի պատճենը կամ կուսակցության կողմից տրված լիազորագիրը, լիազոր ներկայացուցչի կամ լիազորված անձի անձնագիրը, վճարովի եթերաժամից օգտվելու համար՝ նաև «Արցախբանկ» փակ բաժնետիրական ընկերությունում բացված՝ կուսակցության նախընտրական հիմնադրամի ժամանակավոր հատուկ հաշվեհամարը:

11. Ուղիղ եթերի դեպքում կուսակցության ներկայացուցիչը հանրային հեռուստատեսություն և հանրային ռադիո ներկայանում է հերթական եթերաժամից առնվազն 30 րոպե առաջ:

Տեսաերիզները հանրային հեռուստաընկերություն ներկայացվում են մինչև հեռարձակման օրը՝ ժամը 14.00:

Ձայներիզները հանրային ռադիո ներկայացվում են նախընտրական քարոզչության համար սահմանված եթերաժամի սկզբից առնվազն երկու ժամ առաջ:

12. Հանրային հեռուստատեսության և հանրային ռադիոյի եթերաժամը սույն որոշման համապատասխանաբար N2 և N 3 հավելվածներով սահմանված ժամանակացույցերին համապատասխան չօգտագործելու դեպքում կուսակցությանը դրա փոխարեն այլ եթերաժամ չի տրամադրվում:

13. Հանրային հեռուստատեսությամբ և հանրային ռադիոյով նախընտրական քարոզչություն իրականացնելու նպատակով կուսակցությանը տրամադրված եթերաժամն այլ կուսակցության կամ նրա ներկայացուցչի կողմից օգտագործվել չի կարող:

14. Հանրային հեռուստատեսության և հանրային ռադիոյի վճարովի եթերաժամից օգտվելու համար վճարումները կատարվում են համապատասխան կուսակցության հիմնադրամի միջոցներից՝ անկանխիկ ձևով (փոխանցումով):

15. Հանրային հեռուստատեսության կամ հանրային ռադիոյի կողմից կուսակցությանը վճարովի եթերաժամ տրամադրվում է, եթե մինչև եթերաժամի սկիզբը համապատասխանաբար հանրային հեռուստատեսություն կամ հանրային ռադիո ներկայացվել է «Արցախբանկ» փակ բաժնետիրական ընկերության անկանխիկ վճարման (փոխանցման) հանձնարարականը:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՔԱՐՏՈՒՂԱՐ**

Ռ.ՆԱԶԱՐՅԱՆ

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ 2015ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 3-Ի ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՀԱՄԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳՈՎ ՄԱՍՆԱԿՑՈՂ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՄԲ ԱՆՎՃԱՐ ԵՎ ՎՃԱՐՈՎԻ ԵԹԵՐԱԺԱՄ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ

Հ/Հ	Օրը (2015թ.)	«Խաղաղություն և զարգացում» կուսակցություն	«Ազատ հայրենիք» կուսակցություն	«Ազգային վերածնունդ» կուսակցություն	Արցախի Ժողովրդավարական կուսակցություն	Լեռնային Ղարաբաղի կոմունիստական կուսակցություն	«Շարժում-88» կուսակցություն	«Հայ Հեղափոխական Դաշնակցություն» կուսակցություն
1.	31 մարտի	-	-	-	-	-	-	-
2.	1 ապրիլի	+		+			+	+
3.	2 ապրիլի		-		+	+	-	-
4.	3 ապրիլի	-	+	-		-		
5.	4 ապրիլի		-	+	-		+	
6.	5 ապրիլի	+		-	+		-	+
7.	7 ապրիլի		+		-	+		-
8.	8 ապրիլի	-		+		-	+	
9.	9 ապրիլի		-	-	+		-	+
10.	10 ապրիլի	+	+		-			-
11.	11 ապրիլի		-	+		-	+	
12.	12 ապրիլի	-		-				+
13.	13 ապրիլի		+		+		-	
14.	14 ապրիլի	+			-	+		-
15.	15 ապրիլի		-	+		-	+	
16.	16 ապրիլի	+		-	+	+		+
17.	17 ապրիլի	-	+		-		-	
18.	18 ապրիլի			+		+		-
19.	19 ապրիլի	+		-	+			
20.	20 ապրիլի		-			-		+
21.	21 ապրիլի	-	+		-		+	
22.	22 ապրիլի			+		-		-
23.	25 ապրիլի	+			+		-	
24.	26 ապրիլի	-	+			+	+	+
25.	27 ապրիլի		-	-	+			
26.	28 ապրիլի	-				+	-	-
27.	29 ապրիլի	+	+		-	-	+	
28.	30 ապրիլի			+		+		+
29.	1 մայիսի	-	-	-	-	-	-	-

Ծանոթություն_Աղյուսակում «-» նշանով նշագրված է անվճար եթերաժամը, «+» նշանով՝ վճարովի եթերաժամը:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
 ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
 ՔԱՐՏՈՒՂԱՐ

Ռ.ՆԱԶԱՐՅԱՆ

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ 2015-ԹՎԱԿԱՆԻ
 ՄԱՅԻՍԻ 3-Ի ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՀԱՄԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳՈՎ
 ՄԱՍՆԱԿՑՈՂ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՀԱՆՐԱՅԻՆ ՌԱԴԻՑԻՈՅՈՎ ԱՆՎՃԱՐ ԵՎ
 ՎՃԱՐՈՎԻ ԵԹԵՐԱԺԱՄ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ**

Հ/Հ	Օրը (2015թ.)	«Ազատ հայրենիք» կուսակցություն	Լեռնային Ղարաբաղի կոմունիստական կուսակցություն	«Ազգային վերածնունդ» կուսակցություն	Արցախի Ժողովրդավարա- կան Կուսակցություն	«Հայ Հեղափոխական Դաշնակցություն» կուսակցություն	«Նատարություն և զարգացում» կուսակցություն	«Շարժում-88» կուսակցություն
1.	31 մարտի	-	-	-	-	-	-	-
2.	1 ապրիլի	+	+			+		+
3.	2 ապրիլի	-	-	+	+		-	
4.	3 ապրիլի			-		-	+	-
5.	4 ապրիլի		+		-	+	-	
6.	5 ապրիլի	+	-		+	-		+
7.	7 ապրիլի	-		+	-		+	
8.	8 ապրիլի		+	-		+		-
9.	9 ապրիլի	+	-		+	-	-	
10.	10 ապրիլի	-			-		+	+
11.	11 ապրիլի		+	-		+	-	
12.	12 ապրիլի	+				-		-
13.	13 ապրիլի		-		+		+	
14.	14 ապրիլի	-		+	-			+
15.	15 ապրիլի		+	-		+	-	
16.	16 ապրիլի	+		+	+	-		+
17.	17 ապրիլի		-		-		+	-
18.	18 ապրիլի	-		+		+		
19.	19 ապրիլի				+	-		+
20.	20 ապրիլի	+		-			-	
21.	21 ապրիլի		+		-		+	-
22.	22 ապրիլի	-		-		+		
23.	25 ապրիլի		-		+			+
24.	26 ապրիլի	+	+	+			+	-
25.	27 ապրիլի				+	-	-	
26.	28 ապրիլի	-	-	+				-
27.	29 ապրիլի		+	-	-		+	+
28.	30 ապրիլի	+		+		+		
29.	1 մայիսի	-	-	-	-	-	-	-

Ծանոթություն_Աղյուսակում «-» նշանով նշագրված է անվճար եթերաժամը, «+» նշանով վճարովի եթերաժամը:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
 ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
 ՔԱՐՏՈՒՂԱՐ**

Ռ.ՆԱԶԱՐՅԱՆ